ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«___» _____ 2016 թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 615-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 5-ի «Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 615-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍՊԱՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍՊԱՆԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) որոշման նախաբանում «5-րդ հոդվածի 2-րդ կետին» բառերը փոխարինել «6-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին» բառերով.

3) որոշման 1-ին կետում «կարգը» բառից հետո լրացնել «և սպանդին ներկայացվող պահանջները» բառերը.

4) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ *Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԼՂՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ	Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ		
2.	ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ	Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ		
3.	ԼՂՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ		
4.	ԼՂՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Ս. ԹԵՎՈՍՅԱՆ		
5.	ԼՂՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Կ. ԱԹԱՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____

_____

_____

_____

_____

_____

_____

Նախագիծը ներկայացնողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարար *Ա. Մխոյան*

«____» _____ 2016թ.

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2016 թվականի _____-ի
N _____ -Ն որոշման
«Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2012 թվականի սեպտեմբերի 5-ի
N 615 -Ն որոշման

ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍՊԱՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍՊԱՆԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների և թռչունների (այսուհետ՝ սպանդային կենդանիներ) սպանդի կազմակերպման հետ կապված հարաբերությունները և սպանդին ներկայացվող պահանջները:

2. Սպանդային կենդանիներ են համարվում տասնչորս օրականից բարձր հասակի առողջ, այդ թվում՝ անբավարար բտված, թերզարգացած, ստերջ, ամորձատված, ոչ մթերատու, տարերային աղետի արդյունքում անկման վտանգված, ինչպես նաև խոտանված՝ աճեցման և բտման համար ոչ պիտանի, մեխանիկական չվերականգնվող վնասվածքներով, արատներով, ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդ և նորմայի սահմաններում մարմնի ջերմաստիճան ունեցող տավարը, գոմեշը, եղջերուն, ուղտը, ոչխարը, այծը, խոզը, ձին, էշը, ջորին, կուղբը, ջրաքիսը, ճագարը, հավը, սագը, բադը, հնդկահավը, ջայլամը, խայտահավը և լորը:

3. Սպանդանոցը կարող է լինել առանձին շինության, շինությունների համալիրի տեսքով կամ մսի կոմբինատների, սառնարանային կոմբինատների և կենդանական ծագման մթերք արտադրող, վերամշակող կազմակերպությունների կազմում:

4. Սպանդանոցները պետք է ապահովված լինեն, ըստ կենդանու տեսակի, սպանդի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներով:

5. Ըստ հերթափոխում իրականացվող մորթի քանակության կամ սպանդային միավորի՝ սպանդանոցները լինում են՝

1) խոշոր՝ հերթափոխում երեք հարյուրից ավելի սպանդային միավոր հզորությամբ.

2) միջին՝ երեսունից մինչև երեք հարյուր սպանդային միավոր հզորությամբ.

3) փոքր՝ մինչև երեսուն սպանդային միավոր հզորությամբ:

6. Սպանդային միավոր է համարվում սպանդի ենթարկված վեց ամսականից բարձր հասակի տավարի, գոմեշի, եղջերուի, ուղտի, ձիու, էշի, ջորու, խոզի մեկական, վերջինիս մինչև վեց ամսական հասակի, ոչխարի և այծի՝ երեքական, թռչնի՝ քսանական, ճագարի, կուղբի, ջրաքիսի՝ տասական գլուխը:

7. Տավարի և գոմեշի սպանդի համար նախատեսված սպանդանոցում կարող է իրականացվել նաև ուղտի, ձիու, էշի, ջորու, խոզի սպանդ: Թռչնի համար նախատեսված սպանդանոցում կարող է իրականացվել միայն թռչնի, իսկ ճագարի, ջրաքիսի, կուղբի համար նախատեսված սպանդանոցում՝ միայն այդ կենդանատեսակների սպանդ:

8. Ըստ իրականացվող մորթի քանակության՝ փոքր սպանդանոցները լինում են հերթափոխում երեք, վեց, տասներկու կամ տասնութ, քսանչորս, երեսուն սպանդային միավոր հզորությամբ:

9. Սույն կարգի դրույթները տարածվում են միս արտադրող, մթերող և վերամշակող կազմակերպությունների վրա:

10. Սպանդի ենթակա չեն սիբիրախտով, խշխշան պալարով, ժանտախտով, չարորակ կատառային տենդով, սպունգանման էնցեֆալոպատիայով, կատաղությամբ, կարկամախտով, չարորակ այտուցով, բրադզոտով, էնտերոտոքսեմիայով, ոչխարի սկրեպիով, տուլյարեմիայով, բոտուլիզմով, միասմբակավորների խլնախտով, համաճարակային լիմֆանգոիտով, խոզերի և միասմբակավորների աֆրիկական ժանտախտով, մելիոիդոզով, ձիերի զուգավորման հիվանդությամբ, հպավարակային մետրիտով, վիրուսային հոդաբորբով, ճագարների միքսոմատոզով, վիրուսային արյունահոսային հիվանդությամբ, թռչունների գրիպով, օրնիտոզով, Նյու-Քասլով հիվանդ կամ հիվանդության մեջ կասկածվող, մալեինիզացիայի չենթարկված, չախտորոշված հիվանդությամբ հիվանդ, սատկած կամ հոգեվարքի վիճակում գտնվող կենդանիները:

11. Կենսապատրաստուկներ, հակաբիոտիկներ, հորմոններ, հակամակաբուծային դեղամիջոցներ ստացած կամ դրանցով արտաքին մակաբույծների նկատմամբ մշակված սպանդային կենդանիները ենթակա են սպանդի այդ պատրաստուկների օգտագործման հրահանգով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

12. Սպանդային կենդանիները սպանդանոց ուղարկվելուց առաջ մաքրվում են և անասնաբույժի կողմից ենթարկվում են զննման:

13. Սպանդանոց տեղափոխվում են համաճարակային և անասնահամաճարակային տեսակետից ապահով կամ կենդանիների և մարդկանց առողջության պահպանման նկատառումներից ելնելով կենդանիների շարժի սահմանափակում կամ արգելում չունեցող տնտեսությունների սպանդային կենդանիները:

14. Ձկով, խեցգետնով կամ դրանց մնացորդներով, ձկնալյուրով կերակրված գյուղատնտեսական կենդանիներն սպանդի են ենթարկվում վերջին կերակրումից հետո երեսուն օր, իսկ թռչունները՝ տաս օր հետո:

15. Սպանդային կենդանիներին խմելու ջուրը տրվում է անսահմանափակ և դադարեցվում է սպանդից երեք ժամ առաջ:

16. Առողջ, հիվանդ կամ խոտանված սպանդային կենդանիները տեղափոխվում են առանձնացված:

17. Սպանդանոցի անասնաբազայում սպանդային կենդանիները բեռնաթափվում են ուղեկցող անասնաբուժական փաստաթղթի առկայության դեպքում՝ երկու ժամվա ընթացքում: Ընդունված գլխաքանակը ենթարկվում է նախասպանդային զննման և ջերմաչափման, որոնց արդյունքներն սպանդանոցի անասնաբուժական ծառայության կողմից գրանցվում են համապատասխան գրանցամատյանում:

18. Նախասպանդային զննումը ներառում է՝

1) կենդանիների նույնականացումը՝ համարակալման միջոցով ճանաչումը բացահայտելը.

2) կենդանիների անասնաբուժական զննումը և ըստ անհրաժեշտության՝ այլ հետազոտություններ, որոնք բացահայտում են, որ՝

ա. առկա են շեղումներ սովորական պահվածքից՝ առանձին-առանձին կամ խմբովի ցուցաբերում են այնպիսի պահվածք, որը ցույց է տալիս հիվանդության առկայությունը կամ դրա հնարավորությունը,

բ. ակներև են հիվանդությանը բնորոշ կամ ընդհանուր նշաններն ու ախտանշանները, որի հետևանքով հիվանդությունը կարող է փոխանցվել կենդանիներին կամ մարդկանց՝

կենդանիների, կենդանիների սպանդից գոյացած մթերքի և հումքի հետ շփման կամ օգտագործման միջոցով, կամ այդ կենդանիների սպանդից ստացված մթերքը և հումքը մարդկանց կողմից սպառման համար կարող են ճանաչվել ոչ պիտանի,

գ. կենդանիների աճեցման ընթացքում օգտագործվել են չթույլատրված նյութեր և աղտոտիչներ, կամ գերազանցվել են մնացորդային նյութերի սահմանված առավելագույն թույլատրելի քանակները.

3) կենդանիների բուծման և աճեցման ընթացքում անասնաբուժական միջամտությունների և անասնաբուժական դեղամիջոցների օգտագործման վերաբերյալ գրանցումների ու փաստաթղթերի՝ ներառյալ ուղեկցող անասնաբուժական ձևաթղթերի առկայությունը:

19. Եթե սպանդային կենդանիների խմբում հայտնաբերվում է վարակիչ հիվանդություն, հոգեվարքի վիճակ, հարկադիր սպանդի ենթարկված կամ անկած կենդանիների դիակներ, գլխաքանակի անհամապատասխանություն ուղեկցող անասնաբուժական փաստաթղթում նշված տվյալներին, խումբը երեք օրվանից ոչ ավելի ժամկետով տեղափոխվում է կարանտինային մասնաշենք՝ մինչև հիվանդության ախտորոշումը կամ անհամապատասխանության բացահայտումը:

20. Սպանդանոցում հայտնաբերված անկած կենդանիները չեն բեռնաթափվում: Սիբիրախտի առկայությունը բացառելուց հետո դիակներն ուղարկվում են ոչնչացման կամ օգտահանման՝ անասունների թաղման կամ ոչնչացման համար հատկացված վայրում: Դիակների փոխադրումն իրականացնում է սպանդային կենդանիների տերը:

21. Սպանդանոց ընդունված կենդանիներն սպանդանոցի տարածքից դուրս չեն հանվում:

22. Սպանդային կենդանիների մորթն իրականացվում է նախասպանդային պահվածքից հետո հինգ ժամվա ընթացքում:

23. Խոտանված, հպավարակային թոքաբորբով, տուբերկուլոզով, բրուցելոզով հիվանդ կամ դրական հակազդած, լեյկոզով, ձիերի վարակիչ սակավարյունությամբ, էնցեֆալոմիելիտով, խոզերի դասական ժանտախտով, թռչունների պաստերելոզով, ծաղիկ-դիֆթերիտով, լարինգոտրախեիտով, մարսողական համակարգի հիվանդություններով, թարախային բորբոքումներով, թարախային մեռուկացած վերքերով, կրծի բորբոքումով, մատղաշի պորտի և հոդերի բորբոքումով հիվանդ սպանդային կենդանիները ենթակա են սանիտարական սպանդի, որոնց սպանդը կազմակերպվում է նախապես սահմանված սանիտարական օրերին: Այդ օրերին սպանդը կազմակերպվում է առողջ կենդանիների սպանդի իրականացումից հետո՝ սպանդի սրահից հեռացնելով սպանդային ամբողջ մթերքը՝ կատարելով մանրակրկիտ մեխանիկական մաքրում և ախտահանություն:

24. Սպանդանոցի կառուցումը և շահագործումն իրականացվում են զոոհիգիենիկ նորմերի և անասնաբուժասանիտարական ու բնապահպանական պահանջների պահպանմամբ:

25. Սպանդանոցը պետք է ունենա՝

1) արտադրական կեղտաջրերի կենսաբանական մաքրման ապահովվածություն՝ նախքան կեղտաջրերը կոյուղու կոլեկտոր ուղարկելը, արտադրական կոյուղաջրերի կուտակման և մաքրման փակ տարողություններ, որոնցում կուտակված կեղտաջրերը մեխանիկական մաքրումից հետո վնասազերծվում և պարբերաբար հեռացվում են.

2) մեկուսացված, բետոնապատ հրապարակ՝ կենդանիների արտաթորանքի և մարսողական ուղիների պարունակության հավաքման՝ երեսուն օրից ոչ պակաս տևողությամբ պահելու և կենսաջերմային եղանակով վնասազերծելու համար.

3) կենդանիներ տեղափոխող մեքենաների մաքրման և սանիտարական մշակման հրապարակ.

4) կենդանիների ընդունման համար՝ բաց կամ ծածկապատ շինություն՝ ապահովված ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերով.

5) անջրաթափանց սալիկներով 1.8 մ բարձրությամբ երեսապատված պատեր, քիմիապես կայուն նյութերով պատված հատակներ, իսկ շաղախով սվաղված և հարթեցված պատերի ու առաստաղների դեպքում դրանք պետք է պատված լինեն խոնավակայուն ներկերով.

6) դեպի ներս բացվող և ճանճապահպան ցանցերով պատված արտադրական շենքերի պատուհաններ:

26. Սպանդի իրականացման գործընթացում թույլատրվում է օգտագործել միայն առողջապահության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից թույլատրված սպանդային մթերքի հետ շփվող նյութեր:

II. ՍՊԱՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

27. Սպանդանոցներում սպանդի գործընթացը կազմակերպվում է անասնաբուժության բնագավառում պետական կառավարում իրականացնող լիազոր մարմնի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության եզրակացությամբ և հսկողությամբ:

28. Սպանդը կատարվում է սպանդային սրահում կամ մասնաշենքում՝ ըստ կենդանատեսակների, հերթափոխերով:

29. Սպանդի կազմակերպման գործընթացում պետք է բացառվի՝

1) սպանդային մթերքի շփման հնարավորությունը հումքի և թափոնների, սպանդային կենդանիների հետ.

2) առողջ կենդանիների շփման հնարավորությունը կարանտինացման ենթակա, մեկուսարան տեղափոխվող կամ սանիտարական սպանդի ենթակա կենդանիների հետ.

3) այնպիսի ջրի օգտագործումը, որը չի համապատասխանում նորմատիվ իրավական ակտերով խմելու ջրին ներկայացվող պահանջներին.

4) կեղտաջրերի արտահոսքը սպանդի տարածքից դուրս:

30. Սպանդի տեխնոլոգիական գործընթացներն են՝ կենդանիների նախասպանդային պահվածքը և սպանդը, սպանդային մթերքի դրոշմակնքումը, կշռումը, պահեստավորումը և վերամշակումը, իսկ սպանդի գործընթացը ներառում է նախասպանդային և հետսպանդային զննման, կենդանու շշմեցման, կենդանու ուղղաձիգ բարձրացման և կախման, արյունաքամության, ներքին օրգանների հեռացման, մաշկահանման, մսեղիքի առաջնային մասնատման՝ կիսման և քառատման, մսեղիքի մաքրման ու հարդարման և անասնաբուժասանիտարական փորձաքննության փուլերը:

31. Սպանդից առաջ սպանդային կենդանիները ենթարկվում են շշմեցման՝ էլեկտրական հոսանքով, որը բացառում է կենդանու մահը: Անհրաժեշտության դեպքում սպանդային կենդանիների շարժողական ակտիվությունը սահմանափակվում է անշարժացման միջոցով:

32. Սպանդային կենդանիների շշմեցումը և մորթը կատարվում է կենդանու տվյալ տեսակի համար նախատեսված միջոցներով:

33. Մորթից հետո կենդանու հետագա մշակումը կատարվում է անասնաբուժական ծառայություն մատուցող անձի կողմից:

34. Մսեղիքից ներքին օրգանների հեռացման աշխատանքները կատարվում են կենդանու շշմեցումից 45 րոպե կամ արյունաքամության ավարտից հետո՝ 30 րոպեի ընթացքում:

35. Բժշկական, կենսաբանական նպատակներով ներզատիչ և արտազատիչ գեղձերի, արյան հավաքը պետք է կատարվի միայն առողջ կենդանիներից՝ պահպանելով մանրէազերծության պայմանները:

36. Սույն կարգի 22-րդ կետում նշված հիվանդություններով հիվանդ, ինչպես նաև այդպիսի հիվանդությամբ հիվանդ կենդանիների արյան հետ խառնված առողջ կենդանիների արյունը ենթակա է վարակազերծման 100 աստիճան Ցելսիուս ջերմաստիճանում՝ երկու ժամ տևողությամբ:

37. Տուբերկուլոզով, բրուցելոզով, լիստերիոզով, լեյկոզով, խոզերի ժանտախտով, կարմրախտով, աուեսկիով, ատրոֆիկ ռինիտով հիվանդ կամ այդ հիվանդություններով վարակվածությամբ կասկածվող կենդանիների սպանդից հավաքված արյունը կարելի է եփելու միջոցով վերամշակել անասնակերի՝ երկու ժամ տևողությամբ զանգվածի խորքում ապահովելով 80 աստիճան Ցելսիուս ջերմաստիճանը:

38. Մորթից հետո մսեղիքի առաջնային մասնատման համար որոճողների, միասմբակավորների մսեղիքը բաժանվում է կիսամսեղիքների և քառանդրիների, որոնք համարակալվում են՝ միևնույն մսեղիքին պատկանելությունը հաստատելու համար: Միևնույն համարով համարակալվում են նաև տվյալ մսեղիքին պատկանող ներքին պարենքիմատոզ օրգանները, ստամոքսաղիքային համակարգի օրգանները, մաշկը, գլուխը: Մորթից հետո թռչունները բաց են թողնվում փետրազերծված:

39. Սպանդանոցում գործում են անասնաբուժասանիտարական փորձաքննության օրգանոլեպտիկ զննման հոսքագծի տեղեր՝ ըստ կենդանատեսակի՝

1) տավարի, գոմեշի, եղջերուի, ուղտի համար՝ չորս տեղ (գլխի, ներքին օրգանների, մսեղիքի և եզրափակիչ զննման համար).

2) ոչխարի, այծի համար՝ երեք տեղ (ներքին օրգանների, մսեղիքի և եզրափակիչ զննման համար).

3) խոզի համար՝ հինգ տեղ (ենթածնոտային ավշային հանգույցների (սիբիրախտի նկատմամբ), գլխի, ներքին օրգանների, մսեղիքի և եզրափակիչ զննման համար).

4) միասմբակավորների համար՝ չորս տեղ (գլխի, ներքին օրգանների, մսեղիքի և եզրափակիչ զննման համար).

5) թռչունների համար՝ երկու տեղ (ներքին օրգանների և եզրափակիչ զննման համար).

6) ճագարի, կուղբի, ջրաքիսի համար՝ երկու տեղ (ներքին օրգանների և եզրափակիչ զննման համար):

Եզրափակիչ տեղն իրենից ներկայացնում է պահեստային կախովի ուղի կամ մսեղիքի մշակման վերջնափուլում գտնվող առանձին տեղ, որտեղ կատարվում է լաբորատոր հետազոտություն, անասնաբուժասանիտարական արդյունքների ամփոփում, որի հիման վրա տրվում է եզրակացություն և կատարվում է մսի անասնաբուժական դրոշմակնքում:

40. Անասնաբուժական զննումը կարելի է կատարել հարմարեցված սեղանների կամ կախարանների վրա՝ սպանդանոցի անասնաբուժական ծառայության կողմից անասնաբուժասանիտարական փորձաքննության հոսքագիծ ապահովելու անհնարինության մասին եզրակացության առկայության դեպքում:

41. Մինչև անասնաբուժական զննման ավարտը, որը ներառում է նաև խոզի մսեղիքի տրիխինելոսկոպիան, սպանդից ստացված մթերքը՝ բացառությամբ մաշկի, խոշոր եղջերավորների ոտքերի և ականջների, մանր եղջերավորների գլխի և ոտքերի, պետք է մնա սպանդի արտադրամասում կամ սրահում:

42. Անասնաբուժական զննման նախապատրաստումը կատարվում է՝

1) խոշոր եղջերավորներից, ուղտից գլուխն անջատվում է մսեղիքից և կախվում կախիչից կամ տեղավորվում սեղանին, որից հետո լեզուն կտրվում է բերանի խոռոչի վերնամասից ու կողերից այնպես, որ չվնասվի և ազատ դուրս ընկնի միջծնոտային տարածությունից, պահպանվում են զննման ենթակա բոլոր ավշային հանգույցները.

2) միասմբակավորների գլուխն անջատվում է մսեղիքից, և լեզուն դուրս բերելուց հետո սղոցվում է քթի միջնապատը՝ պահպանելով նրա ամբողջականությունը.

3) խոզի գլուխը մակաճեղքվում է և թողնվում է մսեղիքին կպած՝ մինչև անասնաբուժական զննման ավարտը.

4) հորթի, այծի, ոչխարի գլուխներն անջատվում են ծոծրակ-ատլասային հոդի հատվածում, թողնվում են մսեղիքին կպած՝ մինչև անասնաբուժական զննման ավարտը.

5) մսեղիքից անջատված սիրտը, թոքերը շնչափողի հետ և լյարդը պետք է լինեն միմյանց միացած բնական կապով: Որոճողների փայծաղը կարող է լինել բնական կապի մեջ կտրիչի հետ կամ առանձնացված, վերջինիս դեպքում այն ներկայացվում է անասնաբուժական զննման ներքին պարենքիմատոզ օրգանների հետ միասին.

6) ստամոքսաղիքային համակարգը և սեռական օրգանները, կուրծը տեղավորվում են հոսքային գծի կամ սեղանի վրա.

7) մսեղիքը կախվում է աքիլլեսյան ջլից կամ տեղավորվում սեղանին.

8) մաշկի զննումից առաջ ներքին օրգաններն անջատվում են մսեղիքից:

43. Հետսպանդային զննումը կատարվում է սպանդից հետո անմիջապես՝ մսեղիքի և ներքին օրգանների նկատմամբ, որպեսզի հայտնաբերվեն՝

1) կենդանիների վարակիչ՝ ինֆեկցիոն և մակաբուծային հիվանդությունները.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ չթույլատրված կամ սահմանային թույլատրելի մակարդակները գերազանցող մնացորդային նյութերը կամ աղտոտիչները.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անվտանգության մանրէաբանական, որակական չափանիշներին անհամապատասխանությունը.

4) օտար մարմիններ, մակաբույծներ, ուռուցքներ, վերքեր, ոչ վարակիչ բնույթի ախտահարումներ, որոնցից ելնելով, որոշվում է մսի պիտանիությունը մարդու կողմից սպառման համար, կամ սահմանափակվում է այդպիսի մսի օգտագործումը:

44. Հետսպանդային զննման ընթացքում՝

1) ուսումնասիրվում են ներքին օրգանների արտաքին մակերեսները՝ ուշադրություն դարձնելով կենդանիների կարանտինային, հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների կամ Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության կողմից սահմանված ցանկում ընդգրկված հիվանդությունների հայտնաբերմանը.

2) շոշափվում ու կտրվում են մսեղիքը և ներքին օրգանները.

3) կատարվում է նմուշառում.

4) միջոցներ են ձեռնարկվում, որպեսզի աղտոտումը բացառվի կամ հասցվի նվազագույնի:

45. Նմուշառումը կատարվում է՝ բացառելով կամ նվազագույնի հասցնելով աղտոտումը և հիվանդությունների տարածումը, նմուշները պատշաճ կերպով մշակվում և ուղարկվում են հետազոտության՝

1) կենդանիների վարակիչ հիվանդությունների և դրանց հարուցիչների հսկողության ու մոնիթորինգի.

2) սպունգանման էնցեֆալոպատիայի ախտորոշման.

3) չթույլատրված կամ սահմանային թույլատրելի մակարդակները գերազանցող մնացորդային նյութերի կամ աղտոտիչների հայտնաբերման և հսկողության.

4) Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության կողմից սահմանված ցանկում ներառված կենդանիների վարակիչ հիվանդությունների հայտնաբերման.

5) մանրէաբանական սահմանված ցուցանիշների շեղումների հայտնաբերման նպատակներով:

46. Սպանդանոցում վեց ամսականից բարձր տարիքի ընտանի միասմբակավորների, խոշոր եղջերավոր կենդանիների և չորս շաբաթականից բարձր տարիքի ընտանի խոզերի մսեղիքը հետսպանդային զննման ներկայացվում են ողնաշարի երկարությամբ կիսված: Ելնելով անհրաժեշտությունից՝ հետսպանդային զննման համար գլուխը ևս երկարությամբ կիսվում է:

47. Վեց շաբաթականից փոքր հասակի խոշոր եղջերավոր կենդանիների մսեղիքի և փորոտիքի հետսպանդային զննումը ներառում է՝

1) գլխի և կոկորդի տեսողական զննում, հետըմպանային ավշային հանգույցների հատում և զննում, բերանի խոռոչի զննում, լեզվի շոշափում, նշագեղձերի հեռացում.

2) թոքերի, շնչափողի և կերակրափողի տեսողական զննում, թոքերի շոշափում, բրոնխիալ և միջընդերային (մեդիաստենալ) ավշային հանգույցների հատում և զննում: Շնչափողը և բրոնխների գլխավոր ճյուղավորումները կտրվում են երկայնքով, իսկ թոքերը հատվում են իրենց գլխավոր առանցքին ուղղահայաց՝ հետին երրորդային մասում: Նման հատումն անհրաժեշտ չէ, եթե թոքերը չեն օգտագործվելու մարդկանց կողմից սպառման համար.

3) սրտապարկի և սրտի տեսողական զննում: Սիրտը հատվում է երկարությամբ, որպեսզի բացվեն փորոքները և հատվի միջփորոքային միջնապատը.

4) ստոծանու տեսողական զննում.

5) լյարդի, լյարդի և ենթաստամոքսային ավշային հանգույցների տեսողական զննում: Լյարդի և նրա ավշային հանգույցների շոշափում և անհրաժեշտության դեպքում՝ հատում.

6) ստամոքսաաղիքային համակարգի, միջընդերքի, ստամոքսի և միջընդերային ավշային հանգույցների տեսողական զննում: Ստամոքսի և միջընդերային ավշային հանգույցների շոշափում և անհրաժեշտության դեպքում՝ հատում.

7) փայծաղի տեսողական զննում և անհրաժեշտության դեպքում՝ շոշափում.

8) երիկամների տեսողական զննում և անհրաժեշտության դեպքում՝ երիկամների և երիկամային ավշային հանգույցների հատում.

9) թոքամիզի և որովայնամիզի տեսողական զննում.

10) պորտային հատվածի և հոդերի տեսողական զննում, ինչպես նաև շոշափում: Կասկածի դեպքում հատել պորտային հատվածը և բացել հոդերը՝ սինովյալ հեղուկը զննելու նպատակով:

48. Վեց շաբաթականից բարձր հասակի խոշոր եղջերավոր կենդանիների մսեղիքի և փորոտիքի հետսպանդային զննումը ներառում է՝

1) գլխի և կոկորդի տեսողական զննում. ենթածնոտային, հետըմպանային և հարականջային ավշային հանգույցների հատում և զննում.

2) արտաքին ծամիչ մկանի զննում, որի համար կատարվում է ստորին ծնոտին զուգահեռ երկու հատում և ներքին ծամիչ մկանների զննում, որոնք հատվում են մեկ հարթության ուղղությամբ.

3) լեզվի զննում՝ տեսողական զննման և շոշափման միջոցով, լեզուն հանվում է բերանի խոռոչի մանրակրկիտ հետազոտումը հնարավոր դարձնելու համար: Նշագեղձերը հեռացվում են.

4) շնչափողի և կերակրափողի զննում, թոքերի տեսողական զննում և շոշափում: Բրոնխիալ և միջընդերային ավշային հանգույցների հատում և զննում: Շնչափողը և բրոնխների գլխավոր ճյուղավորումները հատվում են երկարությամբ, թոքերը հատվում են իրենց հիմնական առանցքին ուղղահայաց՝ հետին երրորդային հատվածում: Այս հատումներն անհրաժեշտ չեն, երբ թոքերը չեն օգտագործվելու մարդկանց կողմից սպառման նպատակով.

5) սրտապարկի և սրտի տեսողական զննում: Վերջինս հատվում է երկարությամբ, որպեսզի բացվեն փորոքները և հատվի միջփորոքային միջնապատը.

6) ստոծանու տեսողական զննում.

7) լյարդի, լյարդի ու ենթաստամոքսային ավշային հանգույցների տեսողական զննում և շոշափում: Լեղածորանների զննման համար կատարվում է հատում լյարդի ստամոքսային մակերեսի և կաուդալ բլիթի հատվածում.

8) ստամոքսաաղիքային համակարգի, միջընդերքի, ստամոքսի և միջընդերային ավշային հանգույցների տեսողական զննում: Ստամոքսի և միջընդերային ավշային հանգույցների շոշափում և անհրաժեշտության դեպքում հատում.

9) փայծաղի տեսողական զննում և ըստ անհրաժեշտության՝ շոշափում.

10) երիկամների տեսողական զննում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ երիկամների և երիկամային ավշային հանգույցների հատում.

11) թոքամիզի և որովայնամիզի տեսողական զննում.

12) սեռական օրգանների տեսողական զննում (բացառությամբ առնանդամի, եթե այն արդեն հեռացվել է).

13) կրծի և նրա ավշային հանգույցների տեսողական զննում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ շոշափում և հատում: Կովերի դեպքում կրծի յուրաքանչյուր կեսը բացել մինչև կաթնային խոռոչները հասնող երկար, խոր հատումով, իսկ կրծի ավշային հանգույցները հատել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կուրծը չի օգտագործվելու մարդկանց կողմից սպառման նպատակով:

49. Ոչխարների և այծերի մսեղիքի և փորոտիքի հետսպանդային զննումը ներառում է՝

1) մաշկազերծումից հետո գլխի, իսկ կասկածի դեպքում նաև կոկորդի, բերանի, լեզվի և հետըմպանային ու հարականջային ավշային հանգույցների տեսողական զննում: Այս զննումն անհրաժեշտ չէ, եթե գլուխը լեզվի և ուղեղի հետ միասին չի օգտագործվելու մարդկանց կողմից սպառման նպատակով.

2) թոքերի, շնչափողի և կերակրափողի տեսողական զննում, թոքերի, բրոնխիալ և միջընդերային ավշային հանգույցների շոշափում: Կասկածի դեպքում այս օրգանները հատել և ստուգել.

3) սրտապարկի և սրտի տեսողական զննում: Կասկածի դեպքում սիրտը հատել և ստուգել.

4) ստոծանու տեսողական զննում.

5) լյարդի, լյարդի ու ենթաստամոքսային գեղձի ավշային հանգույցների տեսողական զննում, լյարդի և լյարդի ավշային հանգույցների շոշափում, լյարդի ստամոքսային մակերեսի հատում՝ լեղածորաններն ստուգելու նպատակով.

6) ստամոքսաաղիքային համակարգի, միջընդերքի, ստամոքսի և միջընդերային ավշային հանգույցների տեսողական զննում.

7) փայծաղի տեսողական զննում և անհրաժեշտության դեպքում՝ շոշափում.

8) երիկամների տեսողական զննում: Ըստ անհրաժեշտության՝ երիկամների և երիկամների ավշային հանգույցների հատում.

9) թոքամիզի և որովայնամիզի տեսողական զննում.

10) սեռական օրգանների տեսողական զննում (բացառությամբ առնանդամի, եթե այն արդեն հեռացվել է).

11) կրծի և նրա ավշային հանգույցների տեսողական զննում.

12) երիտասարդ կենդանիների պորտի հատվածի և հոդերի տեսողական զննում, ինչպես նաև շոշափում: Կասկածի դեպքում հատել պորտի հատվածը և բացել հոդերը՝ սինովյալ հեղուկն ստուգելու նպատակով:

50. Ընտանի միասմբակավորների մսեղիքի և փորոտիքի հետսպանդային զննումը ներառում է՝

1) գլխի տեսողական զննում, լեզուն անջատելուց հետո կոկորդի տեսողական զննում և շոշափում, անհրաժեշտության դեպքում՝ ստործնոտային, հետըմպանային ու հարականջային ավշային հանգույցների զննում, շոշափում և հատում.

2) լեզվի՝ բերանից դուրսհանում՝ բերանի խոռոչի մանրակրկիտ տեսողական զննման համար, որից հետո լեզվի տեսողական զննում և շոշափում.

3) նշագեղձերի հեռացում և զննում.

4) թոքերի, շնչափողի և կերակրափողի տեսողական զննում, թոքերի շոշափում և անհրաժեշտության դեպքում բրոնխիալ և միջընդերային ավշային հանգույցների հատում: Շնչափողը և բրոնխների գլխավոր ճյուղավորումները հատել երկարությամբ, իսկ թոքերը հատել իրենց հիմնական առանցքին ուղղահայաց՝ հետին երրորդային հատվածում: Այս հատումներն անհրաժեշտ չեն, երբ թոքերը չեն օգտագործվելու մարդկանց կողմից սպառման նպատակով.

5) սրտապարկի և սրտի տեսողական զննում: Վերջինս հատվում է երկարությամբ, որպեսզի բացվեն փորոքները և հատվի միջփորոքային միջնապատը.

6) ստոծանու տեսողական զննում.

7) լյարդի, լյարդի ու ենթաստամոքսային ավշային հանգույցների տեսողական զննում, շոշափում և անհրաժեշտության դեպքում՝ հատում.

8) ստամոքսաաղիքային համակարգի, միջընդերքի, ստամոքսի և միջընդերային ավշային հանգույցների տեսողական զննում, շոշափում և անհրաժեշտության դեպքում՝ հատում.

9) փայծաղի տեսողական զննում և անհրաժեշտության դեպքում՝ շոշափում.

10) երիկամների տեսողական զննում: Ըստ անհրաժեշտության՝ երիկամների և երիկամների ավշային հանգույցների հատում.

11) թոքամիզի և որովայնամիզի տեսողական զննում.

12) սեռական օրգանների տեսողական զննում (բացառությամբ առնանդամի, եթե այն արդեն հեռացվել է).

13) կրծի և նրա ավշային հանգույցների տեսողական զննում և ըստ անհրաժեշտության՝ ավշային հանգույցների հատում.

14) երիտասարդ կենդանիների պորտի հատվածի և հոդերի տեսողական զննում ու շոշափում: Կասկածի դեպքում հատել պորտի հատվածը և բացել հոդերը՝ սինովյալ հեղուկն ստուգելու նպատակով.

15) բոլոր մոխրագույն կամ սպիտակ ձիերի զննում՝ բացահայտելու համար մելանոզների և այլ նորագոյացությունների առկայությունը, որը կատարվում է ուսի միացումը թուլացնելուց հետո թիակոսկրի կռճիկային մասի տակի մկանների և ավշային հանգույցների զննման միջոցով.

16) երիկամների հեռացում, զննում՝ հատելով ամբողջ երկայնքով:

51. Խոզերի մսեղիքի և փորոտիքի հետսպանդային զննումը ներառում է՝

1) գլխի և կոկորդի տեսողական զննում, ենթածնոտային ավշային հանգույցների հատում և զննում, բերանի խոռոչի ու կոկորդի տեսողական զննում.

2) թոքերի, շնչափողի և կերակրափողի տեսողական զննում, թոքերի, բրոնխիալ և միջընդերային ավշային հանգույցների շոշափում: Շնչափողը և բրոնխների մեծ ճյուղավորումները բացել երկարությամբ և թոքերը հատել իրենց գլխավոր առանցքին ուղղահայաց՝ հետին երրորդային մասում: Այս հատումներն անհրաժեշտ չեն, եթե թոքերը չեն օգտագործվելու մարդկանց կողմից սպառման նպատակով.

3) սրտապարկի և սրտի տեսողական զննում: Վերջինս հատվում է երկարությամբ, որպեսզի բացվեն փորոքները և հատվի միջփորոքային միջնապատը.

4) ստոծանու տեսողական զննում.

5) լյարդի, լյարդի ու ենթաստամոքսային ավշային հանգույցների տեսողական զննում, ինչպես նաև լյարդի և դրա ավշային հանգույցների շոշափում.

6) ստամոքսաաղիքային համակարգի, միջընդերքի, ստամոքսի և միջընդերային ավշային հանգույցների տեսողական զննում և շոշափում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ստամոքսային և միջընդերային ավշային հանգույցների հատում.

7) փայծաղի տեսողական զննում և ըստ անհրաժեշտության՝ հատում.

8) երիկամների տեսողական զննում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ երիկամների և երիկամների ավշային հանգույցների հատում.

9) թոքամիզի և որովայնամիզի տեսողական զննում.

10) սեռական օրգանների տեսողական զննում՝ բացառությամբ առնանդամի, եթե այն նախապես հեռացվել է.

11) կրծի և նրա ավշային հանգույցների տեսողական զննում: Էգերի վերկրծային ավշային հանգույցների հատում.

12) երիտասարդ կենդանիների պորտային հատվածի և հոդերի տեսողական զննում ու շոշափում: Կասկածի դեպքում պորտի հատվածը հատել, իսկ հոդերը բացել:

52. Թռչունների հետսպանդային զննումը ներառում է՝

1) նշանակալից թվով թռչունների ներքին օրգանների և մարմնի խոռոչների ամենօրյա զննում, որը կապահովի կատարվածի և ստացված արդյունքների երաշխավորված հավաստիությունը.

2) պատահականորեն ընտրված յուրաքանչյուր տեսակի թռչնի մանրակրկիտ զննում և հետսպանդային ստուգման արդյունքների հիման վրա մարդկանց կողմից սպառման համար ոչ պիտանի ճանաչված՝ միևնույն ծագում ունեցող թռչնի կամ նրա մասերի մանրակրկիտ զննում.

3) անհրաժեշտ հետագա այլ հետազոտություններ, եթե կասկած կա, որ տվյալ թռչնամիսը կարող է ոչ պիտանի լինել մարդկանց կողմից սպառման համար:

53. Բուծվող վայրի կենդանիների հետսպանդային զննումը սահմանափակվում է մսեղիքի ընդհանուր տեսքի տեսողական զննմամբ և շոշափմամբ, իսկ մսեղիքի մասեր կամ օրգաններ հատվում և զննվում են ախտաբանաանատոմիական և հյուսվածքային ախտահարման կամ այլ կասկած հարուցող դեպքերում: Բուծվող վայրի կենդանիների համապատասխան տեսակների համար կիրառելի են խոշոր և մանր եղջերավոր կենդանիների, խոզերի և թռչունների հետսպանդային զննման ձևերը:

54. Սպանդանոցներում ապահովվում է նաև ռիսկային՝ կենդանիներից մարդուն փոխանցվող հիվանդությունների հսկողությունը, որը ներառում է՝

1) եղջերավորների հետազոտումն սպունգանման էնցեֆալոպատիայի նկատմամբ.

2) վեց շաբաթականից բարձր հասակի խոշոր եղջերավոր կենդանիների և խոզերի մեջ ցիստիցերկոզի բացահայտման նպատակով իրականացվող հետսպանդային զննումը, որի ժամանակ կարելի է կիրառել նաև շճաբանական թեստ: Ցիստիցերկներ հայտնաբերելու նպատակով պետք է կատարել առնվազն երկուական զուգահեռ կտրվածքներ ծամող, պարանոցի առջևի մասի, կրծքավանդակի, արմունկաթիակային

հոդի, մեջքի, գոտկի, սրբանի, կոնքի, վերջավորությունների և ստոծանու մկանների վրա: Մսեղիքի, սրտի, գլխի և այլ սպանդային մթերքների 40 քառակուսի սանտիմետր հետազոտման մակերեսի վրա չորս և ավելի կենդանի կամ անկենդան ցիստիցերկների հայտնաբերման դեպքում մսեղիքը, գլուխը և ներքին օրգանները (բացի աղիներից) պիտանի չեն սննդում օգտագործելու համար, ենթակա են ոչնչացման կամ օգտահանման՝ սննդի կամ կերի նպատակով օգտագործումը բացառելով, իսկ ներքին և արտաքին ճարպը հալեցումից հետո կարող է օգտագործվել սննդի մեջ՝ առանց սահմանափակումների: Մսեղիքի, գլխի, սրտի և այլ սպանդային մթերքների 40 քառակուսի սանտիմետր հետազոտման մակերեսի վրա երեքից ոչ ավելի կենդանի կամ անկենդան ցիստիցերկների հայտնաբերման դեպքում մսեղիքը, գլուխը և ներքին օրգանները (բացի աղիներից) ենթակա են սննդում օգտագործման՝ վարակազերծելուց հետո, եփած տեսակի երշիկների և պահածոների արտադրությունում: Վարակազերծումը կատարվում է սառեցմամբ, աղաջրում պահելու (բացի ճարպից) կամ եփելու միջոցով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի N 87 որոշման N 2 հավելվածի համաձայն.

3) տրիխինելոզի նկատմամբ զգայուն ընտանի խոզերի, վայրի կենդանիների, բուծվող վայրի կենդանիների, ընտանի միասմբակավորների և այլ կենդանիների մսեղիքի զննումը, որի արդյունքների հիման վրա՝ տրիխինելոզով ախտահարված միսը պիտանի չէ մարդկանց կողմից սպառման համար, ենթակա է ոչնչացման կամ օգտահանման՝ սննդի կամ կերի նպատակով օգտագործումը բացառելով.

4) ընտանի միասմբակավորների հետազոտումը՝ խլնախտի՝ գեղձատապի բացահայտման նպատակով, որի դեպքում պետք է մանրամասն զննել շնչափողի, կոկորդի, քթի խոռոչների, սինուսների և նրանց ճյուղավորումների լորձաթաղանթները՝ գլուխը միջին (մեդիալ) հարթությամբ կիսելուց և քթի միջնապատը հեռացնելուց հետո: Գեղձատապով ախտահարված ձիերի միսը պիտանի չէ մարդկանց կողմից սպառման համար, ենթակա է ոչնչացման կամ օգտահանման՝ սննդի կամ կերի նպատակով օգտագործումը բացառելով.

5) տուբերկուլինի նկատմամբ դրական կամ կասկածելի հակազդած կենդանիների կամ տուբերկուլյոզով վարակված լինելու հիմքերի առկայությունը, որի դեպքում այդ կենդանիները պետք է սպանդի ենթարկել մյուս կենդանիներից առանձին՝ բացառելու համար մնացած մսեղիքի, սպանդային հոսքագծի և սպանդանոցում ներկա անձնակազմի ախտոտման ռիսկը: Եթե սպանդի ենթարկված կենդանիների մի շարք օրգաններում կամ մսեղիքի մի շարք հատվածներում հայտնաբերվել են տուբերկուլյոզով տեղային ախտահարումներ, ապա ամբողջ մսեղիքը պիտանի չէ մարդկանց կողմից սպառման համար, ենթակա է ոչնչացման կամ օգտահանման՝ սննդի կամ կերի նպատակով օգտագործումը բացառելով: Եթե տուբերկուլյոզով ախտահարում հայտնաբերվել է միայն մի օրգանի ավշային հանգույցներում կամ մսեղիքի մի մասում, ապա մարդկանց կողմից սպառման համար պիտանի չէ միայն ախտահարված օրգանը կամ մսեղիքի հատվածն ու կապակցված ավշային հանգույցը.

6) բրուցելյոզի ախտորոշման թեստի նկատմամբ դրական կամ կասկածելի հակազդած կենդանիների կամ հիվանդությունը կասկածելու այլ հիմքերի առկայությունը, որի դեպքում այդ կենդանիներն սպանդի են ենթարկվում մյուս կենդանիներից առանձին՝ բացառելու համար մնացած մսեղիքի, սպանդային հոսքագծի և սպանդանոցում ներկա անձնակազմի ախտոտման ռիսկը: Եթե հետսպանդային ստուգման ժամանակ հայտնաբերվել է բրուցելյոզով սուր ախտահարում, ապա սպանդի ենթարկված կենդանու ամբողջ միսը պիտանի չէ մարդու կողմից սպառման համար: Բրուցելյոզի ախտորոշման թեստի նկատմամբ դրական կամ կասկածելի հակազդած կենդանիների կուրծը,

միզասեռական համակարգը և արյունը պիտանի չեն մարդու կողմից սպառման համար, ենթակա են ոչնչացման կամ օգտահանման՝ սննդի կամ կերի նպատակով օգտագործումը բացառելով:

55. Սպանդից գոյացած՝ կենդանական ծագում ունեցող կողմնակի արտադրանքը տնօրինվում՝ պահպանվում, օգտագործվում, օգտահանվում (վերամշակվում), ոչնչացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանմամբ:

56. Սպանդային մթերքն սպանդանոցից դուրս է բերվում անասնաբուժական ուղեկցող համապատասխան փաստաթղթի և անասնաբուժասանիտարական փորձաքննության եզրակացության առկայության դեպքում:»:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ *Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 615-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սպանդանոցների կառուցման և գործարկման համատեքստում անհրաժեշտ է վերանայել սպանդանոցներում սպանդի կազմակերպման գործընթացի կանոնակարգումը և սահմանել լրացուցիչ պահանջներ, որոնք կլրացնեն սպանդի գործընթացի անվտանգության երաշխիքները և կապահովեն սպանդից ստացված մթերքի անասնաբուժասանիտարական անվտանգությունը և սպառողների առողջությունը:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Գործող կարգով հստակ սահմանված չեն սպանդից ստացված մթերքի անվտանգությունը լիարժեք և ամբողջական ապահովող կենդանիների նախասպանդային և հետսպանդային անասնաբուժական հսկողության վերաբերյալ դրույթները: Չկան նաև ռիսկային հիվանդությունների հսկողությանը վերաբերող դրույթներ: «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված է սննդամթերքի անվտանգության բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարողների գրանցում լիազոր մարմնում, որը գործունեության վերաբերյալ տրամադրում է եզրակացություն: Նշված պահանջի իրագործման նպատակով անհրաժեշտ է վերանայել կարգում սահմանված գործունեության վերաբերյալ եզրակացություն տալու մասին դրույթը: Որոշման մի շարք դրույթներ ունեն վերանայման կարիք, որը պայմանավորված է նաև 2015 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-58-Ն «Անասնաբուժության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նոր օրենքի ընդունմամբ:

Նպատակը և բնույթը

Նախագծով սահմանվում են սպանդից ստացված մթերքի անվտանգությունը լիարժեք և ամբողջական ապահովող կենդանիների նախասպանդային և հետսպանդային անասնաբուժական հսկողության վերաբերյալ դրույթները՝ հաշվի առնելով սպանդի գործընթացում անվտանգությունը երաշխավորող անասնաբուժական զննման առանձնահատկությունները՝ ըստ կենդանատեսակի: Նախագծով սահմանվում են նաև ռիսկային հիվանդությունների հսկողությանը և անասնաբուժասանիտարական անվտանգությանը վերաբերող դրույթներ: Վերանայվում և հստակեցվում է սպանդանոցի գործունեությանն առնչվող եզրակացություն տալու վերաբերյալ դրույթը:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունումը թույլ կտա սպանդի գործընթացում սահմանել պահանջվող անվտանգության երաշխիքները, սպանդանոցների համար սահմանել հստակ պահանջներ, բարձրացնել անասնաբուժական հսկողության մակարդակը, ապահովել սպանդի գործընթացում և սպանդից հետո իրացվող մթերքի նույնականացումը և վտանգավոր մթերքի բացահայտման հետագծելիությունը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության և իրավաբանական բաժնի կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 5-ի N 615-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ա.ՄԽՈՅԱՆ*

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 615-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 5-ի N 615-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 615-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 5-ի N 615-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ Ա.ՄԽՈՅԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ-ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 615-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 5-ի N 615-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
Հ.ՀԱԿՈԲՅԱՆ

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 5-ի N 615-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն

ԼՂՀ կառավարության և ԼՂՀ վարչապետի որոշումներն ուղարկել՝

1. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԼՂՀ արդարադատության նախարարություն
3. ԼՂՀ ֆինանսների նախարարություն
4. ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ
5. ԼՂՀ շրջանների վարչակազմեր

Նախագիծը պատրաստողը՝

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչություն

_____ ***Ն. Մուսայելյան***
(ստորագրությունը)

«___» _____ 2016 թ.